ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ԳԵՂԱՇԵՆ

01.04.2009ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 04.06.2010 ԹՎԱԿԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հարգելի Գեղաշենցիներ 2009թվականի վեջին վեց ամիսների և 2010թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2009 թվականի հունվարի 21-ին համայնքի ավագանին իր թիվ 3 որոշմամբ հաստատել է 2009թվականի տարեկան բյուջեն, որի եկամուտները կազմել են 52385.4 հազար ՀՀ դրամ, իսկ ծախսերը 45127.6 հազար դրամ:

Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի հարկի չափը կազմել է 1620.0հազ. դրամ: 2009թվականի ընթացքում հավաքագրվել է 4854.7հազ դրամ, որը կազմում է տարեկան պլանի 299%-ը: 148 տնտեսություններ օգտվել են հողի հարկի արտոնություններից, որոնց նախկինում կուտակված պարտքերի տույժերը զրոյացվել են:

2009թվականի գույքային հարկերը հավաքագրվել են 124%-ով, որը բացարձակ թվով կազմում է 10663.9 հազ դրամ:

2009 թվականի դեկտեմբերի 24-ին համայնքի ավագանին իր թիվ 38-րդ որոշմամբ հաստատել է 2010թվականի տարեկան բյուջեն, որի եկամուտները կազմել են 60458,2 հազար ՀՀ դրամ, իսկ ծախսերը 60458,2 հազար դրամ:

Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի հարկի չափը կազմում է 2120.0հազ. դրամ, որից 1-ին կիսամյակում հավաքագրվել է 1735.5 հազ դրամ:

- ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարան օգնության խնդրանքով դիմել են 151 անապահով ընտանիքներ, որոնց խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ տրվել է դրամական օգնություն:

Համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 34-Ն որոշմամբ դրամական /30.000 / օգնություն է տրվում համայնքում նոր ծնված երեխայի ընտանիքին, իսկ համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 35-Ն որոշմամբ դրամական /20.000/ օգնություն է տրվում համայնքում մահացածի ընտանիքին:

- ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Գեղաշենի միջն դպրոցի 2008-2009թթ շրջանավարտներին տրվել է 150.000 ՀՀ դրամ դրամական օգնություն: Գեղաշենի միջն դպրոցի գրադարանին օգնության կարգով տրվել է 100 օրինակ գիրք /WORD, EXCEL/ ծրագրերի:

Համայնքում գուրծում է երաժշտական դպրոց, գրադարան, պարի խմբակ:

- ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի տարախքում կատարվում է աղբահանություն, մաքրվում են նաև ճանապարհները և մայթերը, որի վրա համայնքի բյուջեից 2010թվականի 1-ին կիսամյակում ծախսվել է 774.000 ՀՀդրամ:

- ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Ծխախոտը և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվությունների համար համայնքի 2010թվականի բյուջե գանձվել է 80.000 դրամ:

- ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2009թվականին և 2010թվականի առաջին կիսամյակում համայնքային սեփականություն հանդիսացող հողեր չեն օտարվել:

- ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

2009թվականի երկրորդ կիսամյակու կատարվել է ներհամայնքային ճանապարհների վերանորոգում շուրջ 10.540.100 դրամի: